



Ardshinbank

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԿՈՄԻՏԵՆԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Առաքելություն

Կոմիտեն Խորհրդին առընթեր մշտական գործող կոլեգիալ մարմին է, որն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում կոորդինացնում է Բանկի ռազմավարությանը վերաբերող հարցերը և համակարգում է այս ոլորտին վերաբերող Խորհրդի որոշումների նախաձեռնման, ընդունման, ներդրման և դրանց նկատմամբ հսկողության աշխատանքների իրականացումը:

Կոմիտեի հիմնական նպատակները

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝

- Խորհրդին առաջարկել Բանկի ռազմավարական նպատակներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում դրանց հետագա ճշգրտումներ կամ փոփոխություններ
- Խորհրդին աջակցել՝ սահմանված ռազմավարական նպատակների աղյուսավետ իրագործումն ապահովելու գործում,
- կանխորոշել Բանկի զարգացման ուղղությունները,
- երկարաժամկետ հեռանկարում իր աշխատանքով նպաստել Բանկի գործունեության անընդհատության, արդյունավետության և ներդրումային գրավչության կայուն աճին,
- գնահատել ռազմավարական խնդիրներում Բանկի նախանշված նպատակների կատարման արդյունքները և երկարաժամկետ կտրվածքով Բանկի գործունեության արդյունավետությունը:

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են՝

- Բանկի ռազմավարական խնդիրներին և հեռանկարային զարգացման հարցերին վերաբերող Բանկի գործադիր մարմնի կողմից մշակված փաստաթղթերի, առաջարկությունների և ծրագրերի վերլուծությունը,
- Խորհրդին ներկայացվող առկա զարգացման ռազմավարության բարելավման հետ կապված առաջարկությունների մշակում՝ ելնելով շուկայի հիմնական ցուցիչներից և զարգացման միտումներից, Բանկի և նրա մրցակիցների գործունեության արդյունքներից և այլ գործոնների վերլուծությունից,
- Բանկի գործադիր մարմինների եռամսյակային և տարեկան հաշվետվությունների գնահատում և դրանց վերաբերյալ Խորհրդին իր կարծիքի ներկայացում,
- Խորհրդի և գործադիր մարմնի միջև փոխգործակցության արդյունավետության վերլուծություն և դրա բարելավման վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացում,
- առաջարկությունների քննարկում և մշակում հետևյալ հարցերի շուրջ՝
 - Բանկի գործունեության պլանավորման, մոնիտորինգի և վերլուծության համակարգերի կատարելագործման,
 - Բանկի ֆինանսների կառավարման և արդյունավետության բարձրացման կատարելագործման,
 - Բանկի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի, աշխատավարձերի սանդղակների և չափերի օպտիմալացման,

- բաժնետերերի հետ աշխատանքի ռազմավարության և սեփական կապիտալի կառավարման,
- Բանկի կապիտալիզացիայի մեծացման ռազմավարության,
- եռամսյակային և տարեկան արդյունքներով շահույթի բաշխման,
- շահութաբաժնային քաղաքականության,
- Բանկի կողմից կնքվող խոշոր գործարքների,
 - դուստր և կախյալ ընկերությունների ստեղծման, տարբեր ասոցացիաներում և միություններում մասնակցության,
 - մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման, նրանց վերակազմավորման և լուծարման,
- Խորհրդի հանձնարարություններում նշված այլ խնդիրների շուրջ:
 - տնտեսության մեջ և մասնավորապես բանկային համակարգում Բանկի մրցակցային դիրքերի գնահատում և դրա բարելավման հետ կապված Խորհրդին համապատասխան առաջարկությունների ներկայացում:

Անդամների ցանկ

- Ա. Կոնստանդյան (կոմիտեի նախագահ)
- Կ. Սաֆարյան
- Ա. Ազանբեկյան
- Օ. Գասպարյան
- Գ. Բաբաջանյան
- Վ. Կլաես

ԱՌՒԴԻՏԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Առաքելություն

Կոմիտեն Խորհրդին առընթեր մշտական գործող կոլեգիալ մարմին է, որն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում կորդինացնում է Բանկի աուդիտին և ռիսկերին վերաբերող հարցերը, համակարգում է այս ոլորտին վերաբերող Բանկի ներքին իրավական ակտերի մշակման, ընդունման, ներդրման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև վերահսկում է նշված ակտերի պահպանումը:

Կոմիտեի հիմնական նպատակները

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝

- աջակցել Խորհրդին աուդիտի և ռիսկերի կառավարման բնագավառում իր գործառույթներն արդյունավետ իրագործելու հարցում,
- խթանել Բանկում աուդիտի և ռիսկերի կառավարման վերաբերվող միջազգային առաջավոր փորձի և գործարար սովորույթների ներդրումը,
- Խորհրդի կողմից տրված լիազորությունների շրջանակներում համակարգել Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման և արտաքին աուդիտի գործունեության հետ կապված հարցերը,
- նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերի գծով հնարավոր կորուստների հավանականությունը Բանկի ներքին իրավական ակտերի մշակման և հաստատման գործընթացում,
- Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության կատարելագործման ուղղությամբ Խորհրդին առաջարկությունների ներկայացում:

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են՝

- Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և անդամների թեկնածուների դիտարկում և համապատասխան թեկնածուներին այդ պաշտոնին նշանակելու վերաբերյալ Խորհրդին առաջարկության ներկայացում,
- Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների մեթոդաբանության մշակման, տարեկան աշխատանքային պլանների կազմման և իրագործման հարցերի համակարգում և դրանց վերաբերյալ Խորհրդին եզրակացությունների ներկայացում,
- Բանկի արտաքին աուդիտ անցկացնելու համար թեկնածուների գնահատում և Խորհրդին նրա ընտրության և ծառայությունների դիմաց վարձատրության վերաբերյալ առաջարկության ներկայացում,
- ՀՀ կենտրոնական բանկի, Արտաքին աուդիտի, Ներքին աուդիտի ստորաբաժանման և Պետական մարմինների կողմից Բանկում բացահայտված խախտումների վերացմանն և ապագայում նմանատիպ խախտումների բացառմանն ուղղված առաջարկությունների մշակում,

- Ներքին աուդիտի ստորաբաժանման հետ համատեղ աուդիտորական եզրակացության նախնական դիտարկում և դիտարկման արդյունքները որպես նյութ Խորհրդին և Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացում,
- Բանկի ռիսկերի կառավարման ներքին իրավական ակտերի դիտարկում (ըստ գործունեության տարբեր ուղղությունների) և Խորհրդի կողմից դրա հաստատման և վերանայման վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- հիմնական բանկային ռիսկերի (շուկայական, վարկային, գործառնական, համբավի և այլ) նկատմամբ հսկողության սահմանում և դրանց կառավարման համակարգի արդյունավետության գնահատում,
- ռիսկերի կառավարման հետ կապված Բանկի ղեկավարության գործունեության նկատմամբ վերահսկողություն և Խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման ներքին իրավական ակտերի սկզբունքների և ղեկավարության գործողությունների միջև համապատասխանության գնահատում,
- բանկային ռիսկերի ընդհանուր սահմանաչափերի հաստատման վերաբերյալ հարցերի նախնական դիտարկում,
- ՀՀ կենտրոնական բանկի և Արտաքին աուդիտորների կողմից ռիսկերի կառավարման ոլորտում առաջարկությունների գնահատում և դրանց իրագործման նկատմամբ վերահսկողություն,
- ռիսկերի կառավարման ոլորտում Խորհրդի քննարկմանը ներկայացվող Բանկի ստորաբաժանումների կողմից պատրաստված հաշվետվությունների նախնական քննարկում,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական դիտարկում:

Անդամների ցանկ

- Օ. Գասպարյան (կոմիտեի նախագահ)
- Ա. Անդրեասյան
- Ա. Դանիելյան
- Կ. Սաֆարյան

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Առաքելություն

Կոմիտեն Խորհրդին առընթեր մշտական գործող կոլեգիալ մարմին է, որն իրեն վերապահված իրավասությունների սահմաններում կորպորատիվ կառավարման նագավառում մշակում է Բանկի քաղաքականությունը և գործնականում ապահովում է դրա իրագործումը, աժնետերերի իրավունքների պաշտպանության և ներկորպորատիվ գործընթացների պահպանման ոլորտում հետևում է սահմանված կանոնների կատարմանը, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերի մշակման ժամանակ ցուցաբերում է մեթոդական աջակցություն և իրականացնում է նախագծային փաստաթղթերի փորձաքննություն: Կոմիտեն հանդիսանում է Խորհրդին կից խորհրդակցական մարմին:

Կոմիտեի հիմնական նպատակները

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝

- աջակցել Խորհրդին՝ կորպորատիվ կառավարման և մեթոդոլոգիայի ոլորտում իր գործունեության արդյունավետ իրականացմանը,
- ապահովել Բանկի կողմից կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանումը՝ ՀՀ օրենսդրության և միջազգային լավագույն փորձին համապատասխան,
- Բանկի համապատասխան ստորաբաժանումներին և ծառայություններին ցուցաբերել մեթոդական աջակցություն բիզնեսի և գործընթացների կառավարման արդյունավետությունն ապահովող Բանկի ներքին իրավական ակտերի նախագծերի մշակման ժամանակ:

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառնությունները

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառնություններն են՝

- կորպորատիվ կառավարման վերաբերյալ Բանկի փաստաթղթերի մշակում և պարբերաբար վերանայում, այդ թվում՝ Կանոնադրության, կառավարման մարմինների կանոնակարգերի և դրանց հետ կապված այլ փաստաթղթերի,
- Բանկի կողմից կորպորատիվ կառավարման բնագավառում պահանջների պահպանման ծրագրի մշակում,
- Խորհրդի և դրան կից կոմիտեի աշխատակարգի վերաբերյալ առաջարկությունների մշակում, Խորհրդին վերապահված բարդ հարցերի լուծման ապահովման նպատակով,
- Բանկի ներքին իրավական ակտերի մշակման և համաձայնեցման գործընթացների մեթոդական ղեկավարում և այդ հարցերով զբաղվող Բանկի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ սերտ համագործակցություն,
- ներքին իրավական ակտերի վերանայման ժամկետների և կարգի պահպանման նկատմամբ հսկողություն,

- Խորհրդի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Խորհրդի և նրա անդամների պարբերական գնահատման (ինքնագնահատման) անցկացման, դրա արդյունքների ամփոփման վերաբերյալ առաջարկությունների և դրանցից բխող միջոցառումների մշակում:

Անդամների ցանկ

- Ա. Անդրեասյան (կոմիտեի նախագահ)
- Գ. Թոսունյան
- Ս. Գրիգորյան
- Ա. Դանիելյան
- Վ. Կլաես

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Առաքելություն

Կոմիտեն Խորհրդին առընթեր մշտական գործող կոլեգիալ մարմին է, որն իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում ձևավորում է կարծիք և ներկայացնում առաջարկություններ Բանկի ղեկավարների նշանակումների, Բանկում անձնակազմի խրախուսման գործընթացների, մեխանիզմների, ինչպես նաև անձնակազմի կառավարմանը վերաբերող Բանկի ներքին իրավական ակտերի վերաբերյալ:

Կոմիտեի հիմնական նպատակները

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝

- Բանկի կառավարմանը որակավորված մասնագետների ներգրավման և նրանց հաջող աշխատանքի համար անհրաժեշտ խթանների ստեղծմանը նպաստող կադրային քաղաքականության և խրախուսումների հարցերով Խորհրդի համար առաջարկությունների մշակում,
- Խորհրդին աջակցել Բանկի ղեկավարների խրախուսումների համակարգի ներդրման, ինչպես նաև Բանկի ղեկավարների ընտրության և նշանակման հարցերում,
- Բանկում ձևավորել Բանկի ղեկավարների նշանակման և խրախուսման ամբողջական և համընդհանուր սկզբունքների ամբողջություն,
- իր գործունեությամբ նպաստել Բանկում աշխատանքի արտադրողականության անընդհատ աճին:

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթները

Կոմիտեի հիմնական խնդիրներն ու գործառույթներն են՝

- Բանկի վարչության նախագահի պաշտոնի և վարչության անդամների թեկնածուների ընտրության չափանիշների սահմանում, ինչպես նաև նշված թեկնածուների նախնական գնահատում,
- Խորհրդի կողմից նշանակվող Բանկի ղեկավարի վերաբերյալ իր կարծիքի ներկայացում Խորհրդին,
- հավանություն տալ Բանկի վարչության նախագահի կողմից նշանակվող Բանկի ղեկավարների թեկնածություններին,
- Խորհրդին ներկայացնել իր կարծիքը Բանկի ղեկավարների խրախուսումներին և խրախուսման մեխանիզմներին վերաբերող հարցերի վերաբերյալ,
- Բանկի Խորհրդի անդամների, Վարչության նախագահի և Վարչության անդամների խրախուսման չափերի և նշված անձանց օգտին այլ վճարումների չափերի որոշման սկզբունքների և չափանիշների մշակում: Խրախուսման չափերի որոշման առաջարկությունների մշակման ժամանակ Կոմիտեն ելնում է կադրային ներուժի պահպանման և կատարելագործման անհրաժեշտությունից,
- Կորպորատիվ կառավարման և մեթոդոլոգիայի կոմիտեին տալ Բանկում անձնակազմի խրախուսման գործընթացների, մեխանիզմների, ինչպես նաև անձնակազմի կառավարմանը վերաբերող Բանկի ներքին իրավական ակտերի վերաբերյալ կարծիք:

Անդամների ցանկ

- Ա. Դանիելյան
- Ա. Անդրեասյան
- Կ. Սաֆարյան